

Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2012 թվականի 2-րդ կիսամյակի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ. Ալաշկերտ

---.01.2013թ.

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա երկրորդ կիսամյակը բարենպաստ էր գյուղատնտեսության համար: 2012 թվականի երկրորդ կիսամյակում հավաքագրվել է 7.587087 դրամ հողի հարկ, 2752277 դրամ գույքահարկ: Գյուղում կային բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեին և լուծում են ստացել:

1. Հորդառատ անձրևների պատճառով ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին, կատարվել են դաշտամիջյան ճանապարհների հողալցման աշխատանքներ, իսկ կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման աշխատանքներ:
2. Խմելու ջրի խողովակաշարը կառուցված է 50-60-ական թվականներին, որոնք ունեն վերանորոգման խիստ կարիք: Բազմաթիվ տեղամասերում կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Բնակչության տրվում է խմելու ջուր առավոտյան ժամը 10.00-ից մինչև 16.00:
3. Համայնքում պարբերաբար կատարվում է աղբաթափման աշխատանքներ անվճար /շաբաթը մեկ անգամ/: Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում:
4. Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները գտնվել են գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում և տրվել են ֆինանսական օգնություններ, ոչ միայն վետերաններին, այլ նաև համայնքի անապահով բնակիչներին:
5. Անցկացվել է 6 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղղվել են մարզպետարան, իսկ բյուջեյում կատարված փոփոխությունները, 2013 թվականի համար տեղական տուրքերը և 2013 թվականի բյուջեն սահմանված կարգով ուղարկվել է Արդարատության նախարարության փորձագիտական քննարկմանը:

6. Բնակիչներին տրվել են 350-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի փաստաթղթերի պատճեններ:
7. Ժամանակին և պատշաճ կերպով զինկոմիսարիատի հետ անցկացրել ենք զինակոչիկների կցագրման աշխատանքներ:
8. Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին և Գանձապետարան տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:
9. Դեկտեմբեր ամսին խորքային հորի նաստը խափանվել էր արագ կարգով կատարել ենք վերանորոգման աշխատանքներ և բնակչությանը կատարվել անխափան ջրամատակարարում:
10. Մանկապարտեզի երեխաներին տարեմուտի կապակցությամբ տրվել են Նվերներ:
11. Երաժշտական դպրոցին տրվել է ֆինանսական աջակցություն:

2. Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան մեծ չլուծված հիմնախնդիրներ.

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:

2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

Համայնքի ղեկավարի 2012 թվականի երկրորդ կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Թովմասյանը:

Համայնքի ղեկավար՝



*Յ. Ծամադ*

Կ. Հովհաննիսյան